

ԱՆՂԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՔՀԶԿ գործունեությունը նպաստում է քաղաքացիական հասարակության ամրապնդմանը: ՔՀԶԿ անդամները գիտեն, որ անհատական ներդրումները ավելի են ուժեղանում համագործակցության ջանքերի շնորհիվ:

ԱՆՂԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՔՀԶԿ անդամները իրավունք ունեն

- **Տեղեկանալու անդամության փորձի, գիտելիքի և հմտության մասին**
Աշխատակազմը մշտապես օգնում է անդամակցող կազմակերպություններին՝ ծրագրերի, գործունեությունների և մյուս անդամների տվյալների տեղեկատվության հարցերում: Աշխատակազմի պարտականություններից է տեղյակ պահել կազմակերպության գործունեության վերջին նորություններին:
- **Ծանոթանալու ՔՀԶԿ ղեկավարմանը և գործունեությանը վերաբերող փաստաթղթերին**
ՔՀԶԿ-ն կազմակերպություն է, որը համապատասխանում է ընդհանուր քաղաքացիական հասարակության նորմերին: Անդամները ազատ իրավունք ունեն ծանոթանալու բոլոր այնպիսի հասարակական փաստաթղթերին ինչպիսիք են՝ տեղական իշխանության որոշումները, ռազմավարական ծրագիրը և վարչության նիստերի արձանագրությունները:
Ընտրել, ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում
Անդամները թեկնածու են առաջարկում և ընտրում ՔՀԶԿ վարչություն: Ընտրություններն անցկացվում են 2 տարին մեկ:
- **Ստանալու ՔՀԶԿ բոլոր հրատարակած գործերի մեկական օրինակ**
Անդամները ստանում են ՔՀԶԿ բոլոր հրատարակած գործերի մեկական օրինակ անվճար, իսկ լրացուցիչ օրինակները՝ գեղչով: Ստացված նյութերը տրվում են, որպես պարզ և անդամներին և պետք է օգտագործվեն քաղաքացիական հասարակության զարգացման և քաղաքացիական հասարակության ծրագրերի համար: Դրանք չեն օգտագործվում կոմերցիոն նպատակներով:

ԱՆՂԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- *Բոլոր անդամները պետք է հարգեն ՔՀԶԿի առաքելության ոգին, արժեքներն ու չափանիշները*
- *Բոլոր անդամները պետք է ակտիվ մասնակցություն ունենան ՔՀԶԿ-ի հանդիպումներին և գործողություններին*
- *Բոլոր անդամները պետք է կիսեն իրենց հարուստ գիտելիքները և հմտությունները ՔՀԶԿ-ի մյուս անդամների հետ*
- *Բոլոր անդամները պետք է մասնակցեն Խորհրդի ընտրություններին*
- *Անվերապահորեն կատարել կանոնադրության և Կազմակերպության ղեկավար մարմինների որոշումների պահանջները.*
- *Բարձր պահել Կազմակերպության հեղինակությունը*
- *Բոլոր անդամները պետք է ներկայացնեն անձնակազմին նոր կոնտակտի տեղեկությունը և տեղեկություն իրականացված ծրագրերի մասին:*
- *Կատարել ՀՀ օրենքներով ու այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ*